ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 09 » հունվար 2024թ. No 81 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/4751-23 առ 29.12.2023թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 8 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2023 թվականի հունվարի« 09 » - ի N 81 - Ա հրամանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՂԵՐ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Օնկոֆլյուր 500 | Ֆտորուրացիլ | լուծույթ ներարկման/ կաթիլաներարկման | 50մգ/1մլ; 5(1x5)-ական ապակե սրվակ 10մլ, 50(10x5)-ական ապակե սրվակ 10մլ | Յունայթիդ Բիոտեխ (Պ) ՍՊԸ, Բագբանիա, Բադդի-Նալագարհ Ռոադ, Դիստ. Սոլան (ՀՊ)-174 101 | Հնդկաստան | Վիոլետտա Մեդիկալ Սենտեր ՍՊԸ, Յերզնկյան փողոց 2/33, Արաբկիր, Երևան | Հայաստանի Հանրապետություն | Դ | 21840 28.12.2023 |
| 2 | Էքսֆորժ | ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ), վալսարտան | դեղահատեր թաղանթապատ | 5մգ+160մգ; (14/1x14/) PVC/ PVDC բլիստերում, (28/2x14/) PVC/PVDC բլիստերում, (14/1x14/) PA/AL/PVC(Alu-Alu) բլիստերում, (28/2x14/) PA/AL/ PVC(Alu-Alu) բլիստերում | Նովարտիս Ֆարմա Ս.պ.Ա., Վիա Պրովինչիալե Սկիտո 131, 80058 Տոռե Աննունցիատա (ՆԱ) | Իտալիա | Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիխտշտրասսե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 21841 28.12.2023 |
| 3 | Էքսֆորժ | ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ), վալսարտան | դեղահատեր թաղանթապատ | 10մգ+160մգ; (14/1x14/) PVC/ PVDC բլիստերում, (28/2x14/) PVC/PVDC բլիստերում, (14/1x14/) PA/AL/PVC(Alu-Alu) բլիստերում, (28/2x14/) PA/AL/ PVC(Alu-Alu) բլիստերում | Նովարտիս Ֆարմա Ս.պ.Ա., Վիա Պրովինչիալե Սկիտո 131, 80058 Տոռե Աննունցիատա (ՆԱ) | Իտալիա | Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիխտշտրասսե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 21842 28.12.2023 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Գալվուս | վիլդագլիպտին | դեղահատեր | 50մգ; (28/2x14/) բլիստերում, (56/4x14/) բլիստերում | Նովարտիս Ֆարմասյուտիկալս Մանուֆակչրինգ ՍՊԸ, Վերովսկովա փ. 57, 1000, Լյուբլյանա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա, Սլովենիա- որակի հսկող (մանրէաբանական) | Սլովենիա | Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիխտշտրասե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 21843 28.12.2023 |
| 5 | Պրիվիգեն | մարդու նորմալ իմունոգլոբուլին | լուծույթ կաթիլաներարկման | 100մգ/մլ; 25մլ ապակե սրվակ | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասե 10, ՍՀ-3000, Բեռն 22- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, ըստ ՊԱԳ հավաստագրի՝ ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասե 10, 3014 Բեռն, Շվեյցարիա, ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Բոլլիգենշտրասե 93, 3006 Բեռն, Շվեյցարիա- երկրորդային փաթեթավորող | Շվեյցարիա | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասե 10, ՍՀ-3000 Բեռն 22 | Շվեյցարիա | Դ | 21844 28.12.2023 |
| 6 | Պրիվիգեն | մարդու նորմալ իմունոգլոբուլին | լուծույթ կաթիլաներարկման | 100մգ/մլ; 50մլ ապակե սրվակ | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասե 10, ՍՀ-3000, Բեռն 22- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, ըստ ՊԱԳ հավաստագրի՝ ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասե 10, 3014 Բեռն, Շվեյցարիա, ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Բոլլիգենշտրասե 93, 3006 Բեռն, Շվեյցարիա- երկրորդային փաթեթավորող | Շվեյցարիա | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասե 10, ՍՀ-3000 Բեռն 22 | Շվեյցարիա | Դ | 21845 28.12.2023 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Պրիվիգեն | մարդու նորմալ իմունոգլոբուլին | լուծույթ կաթիլաներարկման | 100մգ/մլ; 100մլ ապակե սրվակ | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասսե 10, ՍՀ-3000, Բեռն 22- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, ըստ ՊԱԳ հավաստագրի՝ ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասսե 10, 3014 Բեռն, Շվեյցարիա, ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Բոլլիգենշտրասսե 93, 3006 Բեռն, Շվեյցարիա- երկրորդային փաթեթավորող | Շվեյցարիա | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասսե 10, ՍՀ-3000 Բեռն 22 | Շվեյցարիա | Դ | 21846<br>28.12.2023 |
| 8 | Պրիվիգեն | մարդու նորմալ իմունոգլոբուլին | լուծույթ կաթիլաներարկման | 100մգ/մլ; 200մլ ապակե սրվակ | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասսե 10, ՍՀ-3000, Բեռն 22- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, ըստ ՊԱԳ հավաստագրի՝ ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասսե 10, 3014 Բեռն, Շվեյցարիա, ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Բոլլիգենշտրասսե 93, 3006 Բեռն, Շվեյցարիա- երկրորդային փաթեթավորող | Շվեյցարիա | ՑՍԼ Բեհրինգ ԱԳ, Վանկդորֆշտրասսե 10, ՍՀ-3000 Բեռն 22 | Շվեյցարիա | Դ | 21847<br>28.12.2023 |